ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Դավիթ Հարությունյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ), 2017թ. հոկտեմբերի 12-ից 14-ը:

Հրավիրող կողմը՝ Ֆրանսիայի Հանրապետության արդարադատության նախարարություն, Փարիզի փաստաբանների միություն:

Գործուղման նպատակը՝ Ֆրանսիայի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնյաների, Փարիզի փաստաբանների միության նախագահի հետ հանդիպումներին մասնակցություն:

Քննարկված թեմաները՝ Քննարկման առարկա են հանդիսացել Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների նոր ռազմավարության և դրանից բխող՝ 2018-2023թթ. միջոցառումների ծրագրին և ՀՀ դատական նոր օրենսգրքի նախագծին առնչվող հարցերը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը 2017թ. հոկտեմբերի 12-ից 14-ը աշխատանքային այցով մեկնել է Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ):

Աշխատանքային այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնյաների, Փարիզի փաստաբանների միության նախագահի, Փարիզի փաստաբանների միության անդամ հայազգի փաստաբանների հետ:

ՀՀ արդարադատության նախարարը վերը նշված հանդիպումների ընթացքում ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում դատական և իրավական բարեփոխումների ուղղությամբ ձեռնարկվող քայլերը: Այդ համատեքստում ՀՀ

արդարադատության նախարարը անդրադարձել է ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի կարգադրությամբ հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017թթ. ռազմավարական ծրագրով և ծրագրից բխող միջոցառումների ցանկում նախատեսված կետերի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018թ. սկզբին նախատեսվում է ընդունել իրավական և դատական բարեփոխումների նոր՝ 2018-2023թթ. միջոցառումների ծրագիրը՝ ՀՀ արդարադատության նախարարն իր գործընկերներին ներկայացրել է նաև «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների նոր՝ 2018-2023թթ. ռազմավարական ծրագրի և ծրագրից բխող միջոցառումների ցանկի» մշակման ուղղությամբ արդեն իսկ իրականացված աշխատանքները:

Վերը նշված հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, մասնավորապես, իրավական ոլորտում երկու պետությունների միջև առկա համագործակցության խորացմանը, առկա օրենսդրական և դատական բարեփոխումներին, պրոբացիոն ծառայության, կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրներին առնչվող հարցեր:

ՀՀ արդարադատության նախարարը հանդիպումների ընթացքում ներկայացրել է նաև ՀՀ-ում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների արդյունքները, որով կառավարման կիսանախագահական մոդելից անցում է կատարվել կառավարման խորհրդարանական մոդելին: Այս համատեքստում ՀՀ արդարադատության նախարարը անդրադարձել է նախագծային փուլում գտնվող ՀՀ դատական օրենսգրքի սահմանադրական օրենքի նախագծին, որի վերաբերյալ արդեն իսկ ստացվել է Վենետիկի հանձնաժողովի փորձագիտական եզրակացություն:

ՀՀ դատական նոր օրենսգրքի նախագծի դրույթներին անդրադառնալիս՝ ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը կարևորել է ՀՀ դատական նոր օրենսգրքով ստեղծվող Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմնի դերը:

ՀՀ արդարադատության նախարար

Դավիթ Հարությունյան